

Կլիմայի փոփոխության դեմ պայքարի քաղաքականությունը

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը ձգտում է սահմանափակել իր ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա և իր ողջ գործունեությունը կայուն կերպով իրականացնել: Մենք համարում ենք, որ մասնավոր հատվածը առանցքային դերակատարություն պիտի ունենա այսօրվա կլիմայական մարտահրավերներին կայուն լուծումներ գտնելու գործում:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության գործունեության հետևանքով ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներն հիմնականում շշալցնող գործարանների աշխատանքի և շարժակազմի կողմից էներգիայի օգտագործման արդյունք են: Անուղղակի արտանետումների աղբյուրները հումքն է (բաղադրիչներ և փաթեթավորում) և սառեցնող սարքավորումները:

Մեր բնապահպանական քաղաքականությանը համահունչ, մենք

- **կկրճատենք** մեր գործունեության ընթացքում սպառվող էներգիայի քանակը:
- **կկիրառենք** այլընտրանքային կամ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներ, որոնք մեր ձեռնարկությունները կապահովեն լրացուցիչ էներգիայով: Սրա օրինակներից է շշալցման գործարանների կողքին ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կայաններ կառուցելու մեր ծրագիրը:
- **կներգրավենք** մեր շահառուներին կլիմայի փոփոխության դեմ պայքարում, օրինակ, աշխատելով մատակարարների հետ փաթեթավորման նյութերում ածխածնի պարունակության և մեր սառեցնող սարքավորումների ածխածնային արտահոսքի նվազեցման ուղղությամբ:

- **Կզեկուցենք** ջերմոցային գազերի մեր արտանետումների, թիրախների, արդյունքների և գործունեության մասին հրապարակավ և Ջերմոցային գազերի արտանետումների արձանագրությանը համապատասխան:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ Գլխային փոփոխության դեմ պայքարի սույն քաղաքականությունը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն